# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-20/15

ք. Երևան «10» 03 2020թ.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Տիգրան Գալստյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Օլիմպիա» ՍՊԸ -ի,ի դեմս տնօրեն Արսեն Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պաշտոնական պատվիրակությունների անդամների համար հյուրասիրության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 3000000 (երեք միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է

տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագրի ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Տիգրան Գալստյան

----------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Օլիմպիա» ՍՊԸ
ք.Երևան,Ծիծեռնակաբերդի պուրակ
ՀՎՀՀ 02526829
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050022105781001
Տնօրեն՝ Արսեն Խաչատրյան

----------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
« 10 » 03 2020թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-20/15 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման հասցեն | մատուցման ժամկետը |
| 1 | 79111200/1 | Պատվիրակության անդամների համար կազմակերպվելիք պաշտոնական հյուրասիրությունը պետք է ներառի<br>1. Սառը խորտիկներ,<br>2. Աղցաններ,<br>3. Տաք խորտիկներ,<br>4. Ապուրներ,<br>5. Տաք ուտեստներ,<br>6. Խավարտներ,<br>7. Ալկոհոլային խմիչքներ,<br>8. Կոկտեյլներ,<br>9. Տաք ըմպելիքներ,<br>10. Զովացուցիչ ըմպելիքներ (նաև բնական),<br>11. Աղանդեր (խմորեղեն),<br>12. Միրգ:<br>*Մասնակիցը գնային առաջարկին կից պետք է ներկայացնի իր կողմից հաստատված ընդհանուր մենյուն՝ ըստ առավելագույն գների:*<br>Վերջնական պատվերը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: | դրամ | 638900 | 1 | ք. Երևան, Ծիծեռնակաբերդի պ. | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.12.2020թ. |

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Տիգրան Գալստյան

(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Օլիմպիա» ՍՊԸ
ք.Երևան,Ծիծեռնակաբերդի պուրակ
ՀՎՀՀ 02526829
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050022105781001
Տնօրեն՝ Արսեն Էդվարդյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
«10» 03 2020թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-20/15 ծածկագրով պայմանագրի

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵՆՅՈՒՆ՝ ԸՍՏ ԳՆԵՐԻ
«Օլիմպիա» ՍՊԸ

ՀՀ դրամ

| | | |
|---|---|---|
| **1.Սառը խորտիկներ** | | |
| Թթվի տեսականի | 1 բաժին | 800.00 |
| Լոռի պանիր | 1 բաժին | 1,200.00 |
| Կծու բիբար | 1 հատ | 400.00 |
| Կանաչու տեսականի | 1 բաժին | 600.00 |
| Կիտրոն, ձիթապտուղ | 1 բաժին | 1,000.00 |
| Հացի տեսականի | 1 բաժին | 800.00 |
| Ձկան տեսականի | 1 բաժին | 7,000.00 |
| Ղավուրմա | 1 կգ. | 15,000.00 |
| Մսի տեսականի | 1 բաժին | 6,000.00 |
| Ոչխարի պանիր | 1 բաժին | 1,200.00 |
| Պանրի տեսականի | 1 բաժին | 3,000.00 |
| Ռեժան | 1 բաժին | 1,000.00 |
| Քամած մածուն | 1 բաժին | 800.00 |
| Թթվասեր | 1 բաժին | 1,000.00 |
| Կարմիր ձկնկիթ 70 գր | 1 բաժին | 8,000.00 |
| **2.Աղցաններ** | | |
| Աղցան Ակոռի | 1 բաժին | 1,500.00 |
| Աղցան ամառային | 1 բաժին | 1,200.00 |
| Աղցան ավելուկով | 1 բաժին | 1,000.00 |
| Աղցան բրոկոլիով | 1 բաժին | 1,200.00 |
| Աղցան դանդուռով | 1 բաժին | 600.00 |
| Աղցան կարմիր լոբով | 1 բաժին | 1,000.00 |
| Աղցան հավով | 1 բաժին | 1,000.00 |
| Աղցան տավարի մսով և հոլանդական պանրով | 1 բաժին | 1,500.00 |
| Աղցան Կեսար | 1 բաժին | 1,200.00 |
| Աղցան թաբուլե | 1 բաժին | 800.00 |
| Աղցան մայրաքաղաքային | 1 բաժին | 1,200.00 |
| Աղցան հազարով | 1 բաժին | 800.00 |
| Աղցան թարմ սնկով և լոլիկով | 1 բաժին | 1,200.00 |
| Աղցան Հունական | 1 բաժին | 1,500.00 |
| Աղցան խորոված բիբարով | 1 բաժին | 1,000.00 |
| **3. Տաք խորտիկներ** | | |
| Բոխչա | 1 բաժին | 3,000.00 |
| Գառան թիակ | 1 հատ | 7,000.00 |
| Գառի խաշլամա | 1 կգ | 7,000.00 |
| Խաշած իշխան | 1 կգ | 4,000.00 |
| Խաշած կարմրախայտ | 1 կգ | 9,000.00 |
| Խաշած սիգ | 1 կգ | 4,000.00 |
| Խոզի ժարկո | 1 բաժին | 1,800.00 |

| | | |
|---|---|---|
| Խուրջին | 1 հատ | 2,000.00 |
| Կաթնակեր հորթի թիակ | 1 հատ | 7,000.00 |
| Կարմրախայտ թխմորի մեջ | 1 կգ | 10,000.00 |
| Կերու սուս | 1 բաժին | 2,000.00 |
| Հավի թևիկներ կծու սոուսով | 1 բաժին | 1,200.00 |
| Տավարի շեյկա | 1 կգ | 7,000.00 |
| Փուռիկ | 1 բաժին | 3,000.00 |
| Հսկակոտլետ | 1 հատ | 6,000.00 |
| Պապիկ | 1 բաժին | 4,500.00 |
| Խոզի շեյկա սոուսով | 1 բաժին | 6,000.00 |
| **4.Ապուրներ** | | |
| Հարիսա | 1 բաժին | 1,500.00 |
| Խաշ | 1 բաժին | 2,500.00 |
| Ալելուկով ապուր | 1 բաժին | 1,000.00 |
| Բորշչ | 1 բաժին | 1,000.00 |
| Բրնձով ապուր | 1 բաժին | 800.00 |
| Կարմիր լոբով ապուր | 1 բաժին | 1,000.00 |
| Սալյանկա | 1 բաժին | 1,500.00 |
| Թանապուր | 1 բաժին | 800.00 |
| Չանախ | 1 բաժին | 1,700.00 |
| Կարտոֆիլով,մսով սոուս | 1 բաժին | 1,200.00 |
| **5.Տաք ուտեստներ** | | |
| Խոզի խորոված<br>(չալաղաջ,մաս,փափուկ) | 1 կգ | 7,000.00 |
| Ակոռի քաբաբ | 1 հատ | 1,200.00 |
| Գառի խորոված | 1 բաժին | 1,500.00 |
| Գառան քաբաբ | 1 հատ | 1,300.00 |
| Իշխանի խորոված | 1 կգ | 4,000.00 |
| Հավի կրծքամսի խորոված | 1 կգ | 4,000.00 |
| Խորոված ճուտ | 1 հատ | 1,500.00 |
| Կաթնակեր հորթի խորոված | 1 բաժին | 2,000.00 |
| Կանաչիյով քաբաբ | 1 հատ | 1,200.00 |
| Կանեփով քաբաբ | 1 հատ | 1,200.00 |
| Կծու բիբարով քաբաբ | 1 հատ | 1,200.00 |
| Կտրտած մսով քաբաբ | 1 հատ | 1,200.00 |
| Ուրֆայի քաբաբ | 1 հատ | 1,300.00 |
| Պանրով քաբաբ | 1 հատ | 1,200.00 |
| Կարմրախայտ խորոված | 1 կգ | 9,000.00 |
| Հավի խորոված | 1 կգ | 4,000.00 |
| Սալորչրով կոտլետ կրակի վրա | 1 հատ | 1,200.00 |
| Սնկով քաբաբ | 1 հատ | 1,200.00 |
| Ստեռլյադի խորոված | 1 կգ | 6,000.00 |
| Տավարի չալաղաջ սոուսով | 1 կգ | 7,000.00 |
| Տավարի սուկի | 1 կգ | 10,000.00 |
| Տավարի քաբաբ | 1 հատ | 1,000.00 |
| Դդումի խորոված | 1 բաժին | 500.00 |
| Սնկի խորոված | 1 կգ | 4,000.00 |
| Հավի քաբաբ | 1 հատ | 700.00 |
| Հավի քաբաբ նաչինկայով | 1 հատ | 800.00 |
| **6.Խավարտներ** | | |

| | | |
|---|---|---|
| Արիշտայ ով փլ ավ | 1 բաժին | 800.00 |
| Բրնձով փլ ավ | 1 բաժին | 800.00 |
| Բրնձով փլ ավ ռակի պոչի սոուսով | 1 բաժին | 5,000.00 |
| Լոլ իկով ձվածեղ | 1 բաժին | 1,000.00 |
| Հաճարով սնկով փլ ավ | 1 բաժին | 1,200.00 |
| Բրնձով փլ ավ սնկի սոուսով | 1 բաժին | 1,500.00 |
| Սպագետի | 1 բաժին | 800.00 |
| Ուզբեկական փլ ավ | 1 բաժին | 1,700.00 |
| Սպագետի ռոքֆորի սոուսով | 1 բաժին | 1,200.00 |
| Բաստուրմայ ով ձվածեղ | 1 բաժին | 1,500.00 |
| Սեզոնայ ին կանաչ իներ | 1 բաժին | 3,000.00 |
| | 7.Ալկոհոլ այ ին խմիչքներ | |
| Օղի Աբ| պ| ուտ | 1 հատ | 7,000.00 |
| Օղի բել ուգաս | 1 հատ | 11,000.00 |
| Օղի Գրել գուս | 1 հատ | 22,000.00 |
| Օղի Կոսկենկորվա | 1 հատ | 6,000.00 |
| Օղի Նեմիրոֆ| եքս | 1 հատ | 8,000.00 |
| Օղի Ստերեբրոմ | 1 հատ | 4,000.00 |
| Օղի Ստերեբրեմ գոլ դ | 1 հատ | 5,000.00 |
| Օղի Սայ մա | 1 հատ | 6,000.00 |
| Օղի Ցարսկայ աօրիգինայ | 1 հատ | 4,000.00 |
| Օղի Ցարսկայ ազոլ դ | 1 հատ | 6,000.00 |
| Օղի Ֆին| անդիա | 1 հատ | 6,000.00 |
| Օղի Բել ուգասպիտակ | 1 հատ | 9,000.00 |
| Օղի Կրեմլ ին սև | 1 հատ | 15,000.00 |
| Օղի Կրեմլ ին սպիտակ | 1 հատ | 11,000.00 |
| Օղի Ֆինսկի | 1 հատ | 4,000.00 |
| Օղի Օհան| ան | 1 հատ | 7,000.00 |
| Օղի Օհան| ան այ ս | 1 հատ | 8,000.00 |
| Օղի Նորպա | 1 հատ | 6,000.00 |
| Օղի Ստոլ իչնայ ա | 1 հատ | 5,000.00 |
| Օղի Չիստի կրիստալ | 1 հատ | 5,000.00 |
| Օղի Ստուբրաս | 1 հատ | 5,000.00 |
| Օղի Ռոմանով | 1 հատ | 6,000.00 |
| Օղի Մոսկովսկայ ա | 1 հատ | 5,000.00 |
| Օղի Արխանգել սկայ ա | 1 հատ | 4,000.00 |
| Օղի Տնական | 1 հատ | 4,000.00 |
| Գինի Արենի | 1 հատ | 3,000.00 |
| Գինի Արմենիա | 1 հատ | 4,000.00 |
| Գինի Կարաս կարմիր | 1 հատ | 7,000.00 |
| Գինի Կարաս սպիտակ | 1 հատ | 5,000.00 |
| Գինի Վերնաշեն | 1 հատ | 3,500.00 |
| Գինի Տնական | 1 | 4,000.00 |
| Գինի Տակառ կարմիր | 1 հատ | 6,000.00 |
| Գինի Կարաս ռեզերվ | 1 հատ | 16,000.00 |
| Գինի Քուռ | 1 հատ | 7,000.00 |
| Գինի Նոյ ան տապան | 1 հատ | 5,000.00 |
| Գինի Հին Արենի | 1 հատ | 5,000.00 |
| Գինի Կատար ո | 1 հատ | 7,000.00 |

| | | |
|---|---|---|
| Գինի Տակառ սպիտակ | 1 հատ | 5,000.00 |
| Գինի Իջևան | 1 հատ | 4,000.00 |
| Կոնյակ Ախթամար | 1 հատ | 16,000.00 |
| Կոնյակ Ընտիր | 1 հատ | 12,000.00 |
| Կոնյակ Նաիրի | 1 հատ | 44,000.00 |
| Կոնյակ Տոնական | 1 հատ | 27,000.00 |
| Վիսկի Բլեքլեյբլ | 50 մլ | 1,600.00 |
| Վիսկի Չիվաս 12 | 50 մլ | 1,500.00 |
| Վիսկի Չիվաս 18 | 50 մլ | 3,000.00 |
| Վիսկի Ջեք Դենիելս | 50 մլ | 1,800.00 |
| Վիսկի Ռեդլեյբլ | 50 մլ | 800.00 |
| Գարեջուր Կիլիկիա | 0.5 լ | 700.00 |
| Գարեջուր Կիլիկիա | 0,33 լ | 600.00 |
| Գարեջուր Հեյնիկեն | 1 հատ | 1,000.00 |
| Գարեջուր Միլլեր | 1 հատ | 800.00 |
| Գարեջուր Գյումրի | 1 հատ | 600.00 |
| Գարեջուր Արարատ | 1 հատ | 600.00 |
| Գարեջուր Ալեքսանդրապոլ | 1 հատ | 600.00 |
| Գարեջուր Կրոմբախեր | 1 հատ | 1,000.00 |
| **8.Տաք ըմպելիքներ** | | |
| Էսպրեսո | 1 հատ | 700.00 |
| Թեյ տարբեր ձևի | 1 բաժին | 1,000.00 |
| Սուրճ արևելյան | 1 հատ | 250.00 |
| Սուրճ փարիզյան | 1 հատ | 350.00 |
| Սուրճ Յակոբս | 1 հատ | 300.00 |
| **9.Զովացուցիչ ըմպելիքներ** | | |
| Կոլա,ֆանտա,սփրայթ | 1 հատ | 250.00 |
| Ջուր,Հանքային խառը | 1 հատ | 250.00 |
| Նատախտարի | 1 հատ | 400.00 |
| Տնական Կոմպոտ | 1 լ | 2,000.00 |
| **10.Աղանդեր** | | |
| Գաթա տնական | 1 հատ | 300.00 |
| Միզարետրնկույզով | 2 հատ | 300.00 |
| Մրգի տեսականի | 1 բաժին | 3,000.00 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Տիգրան Գալստյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Օլիմպիա» ՍՊԸ
ք.Երևան,Ծիծեռնակաբերդի պուրակ
ՀՎՀՀ 02526829
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050022105781001
Տնօրեն՝ Արսեն Խաչատրյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«10» 03 2020թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-20/15 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 79111200/1 | Ներկայացուցչական ծախս /4237/ | 3000000 | 3000000 | 3000000 | 3000000 | 3000000 | 3000000 | 3000000 | 3000000 | 3000000 | 3000000 | 3000000 | 3000000 | 3000000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար – գլխավոր քարտուղար՝
Տիգրան Գալստյան

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Օլիմպիա» ՍՊԸ
ք.Երևան,Ծիծեռնակաբերդի պուրակ
ՀՎՀՀ 02526829
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050022105781001
Տնօրեն՝ Արսեն Խաչատրյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«10» 03 2020թ. կնքված
ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-20/15 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

________________________

________________________

գտնվելու վայրը ____________
հհ ______________________
հվհհ _____________________

Պատվիրատու

________________________

________________________

գտնվելու վայրը ____________
հհ ______________________
հվհհ _____________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

________________________
ստորագրություն

________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

________________________
ստորագրություն

________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*« 10 » 03 2020թ. կնքված*
*ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-20/15 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն